ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ (EBT) ՔԱՐՏ

Ձեր սննդադրոշմի նպաստներն ստանալու հեշտ, ապահով և հարմարավետ ուղին:

Այս գրքույկը պահեք ապահով վայրում:

Հարցե՞ր ունեք: Զանգահարեք Հաճախորդի Սպասարկություն ԱՆՎՃԱՐ՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր

1-877-328-9677

TTY: 1-800-735-2929 (Հեռահաղորդակցությունների Վերահաղորդում Լսողության և Խոսելու Խանգարում Ունեցողների Համար)

www.ebtproject.ca.gov

Եթե այս գրքույկը կարդալուց հետո ցանկանում եք ստանալ լրացուցիչ ուսուցում, խնդրում ենք կապ հաստատել ձեր գործի աշխատողի հետ:

Բառեր, Որ Հարկ Է Իմանալ

POS (Վաճառակետային) Սարք

POS սարքը կարդալով ձեր EBT Քարտը՝ կարտոնի, որ ձեր սննդադրոշմի նպաստներով սնունդ գնեք:

PIN (Անձնական Ինքնության Համար)

PIN-ը չորս թվանշանանոց գաղտնի կոդ է, որը դուք օգտագործում եք ձեր EBT Քարտի հետ, որպեսզի ձեզանից բացի ոչ ոք չկարողանա ձեր քարտն օգտագործել: POS սարքերը չեն աշխատի մինչև չմուտքագրեք ձեր PIN-ը: Ահա թե ինչպիսի՞ տեսք ունի ձեր PIN-ը POS սարքում:

Quest® Նշան

Quest® Նշանը այն նշանն է, որը դուք կտեսնեք վաճառատների դռներին, մթերքները դուրս տանելու շարքերին և POS սարքերի վրա, հուշելով, որ տվյալ վաճառատանը դուք կարող եք օգտագործել ձեր EBT Քարտը: Վաճառատանը գնում կատարելուց առաջ որոնեք Quest® նշանը:

Ձեր PIN-ի Մասին

- Ձեր չորս գաղտնի թվանշանները կոչվում են Անձնական Ինքնության Համար կամ՝ կարճ ասած՝ PIN:
- Ամեն անգամ ձեր քարտն օգտագործելիս, ձեզ հարկավոր է գործածել ձեր PIN-ը, այլապես ձեր քարտը ՉԻ աշխատի և դուք ՉԵՔ կարողանա ձեր նպաստներն ստանալ:
- ՈՉ ՈՔ չգիտի ձեր PIN-ը, հետևաբար անհրաժեշտ է, որ դուք հիշեք ձեր PIN-ը:

Ինչպե՞ս Կարող Եք Ձեր PIN-ը Ապահով Պահել

- ԵՐԲԵՔ չգրեք PIN-ը ձեր քարտի, քարտի պահպանակի, կամ քարտի հետ պահվող ցանկացած այլ բանի վրա:
- Ձեր PIN-ը պահեք գաղտնի: ԵՐԲԵՔ չտաք ձեր PIN-ը ձեր գործի աշխատողին, ընտանիքի անդամներին, վաճառատների վաճառորդներին, կամ որևէ այլ անձի, բացի այն դեպքից՝ եթե ցանկանում եք, որ նրանք կարողանան ստանալ ձեր ԲՈԼՈՐ նպաստները:
- ԵՐԲԵՔ մի օգտագործեք ձեր PIN-ը, եթե կարծում եք, որ ինչ-որ անձ հետևում է ձեզ:
- Ձեր EBT Քարտն օգտագործելիս, դուք կարող եք մինչև չորս անգամ փորձել մուտքագրել ձեր PIN-ը: Եթե ձեր չորրորդ փորձն էլ ձախողվի, դուք չեք կարողանա ձեր քարտն օգտագործել մինչև կեսգիշերն անցնելը: Եթե չեք կարող ձեր PIN-ը հիշել, զանգահարեք Հաճախորդի Սպասարկություն (հեռախոսի համարը նշված է ձեր քարտի հետևը): Հաճախորդի Սպասարկությունը ՉԳԻՏԻ ձեր PIN-ը, բայց կօգնի ձեզ, որ փոխեք ձեր PIN-ը:
- Եթե ինչ-որ անձ իմանա ձեր PIN-ը՝ առանց ձեր հավանության, անմիջապես զանգահարեք Հաճախորդի Սպասարկման համարով կամ այցելեք ձեր հանրային օգնության գրասենյակ՝ PIN-ը փոխելու համար:
- Եթե ինչ-որ անձ առնի ձեր քարտը և գիտի ձեր PIN-ը, կկարողանա օգտագործել ձեր նպաստները: Եթե նպաստները մեկ ուրիշի կողմից հանվել են ձեր Հաճախորդի Սպասարկություն զանգահարելուց առաջ, ՁԵՐ ՆՊԱՍՏՆԵՐԸ ՉԵՆ ՓՈԽԱՐԻՆՎԻ: Անմիջապես զանգահարեք Հաճախորդի Սպասարկություն՝ ձեր քարտը չեղյալ համարելու համար:

Իմացե՛ք Ձեր Հաշվեկշիռը

Ձեր սննդադրոշմի նպաստների հաշվում որքան ծախսելիք գումար մնացած լինելը իմանալու լավագույն եղանակը ձեր հաշվեկշռին ծանոթ լինելն է: Իսկ ձեր հաշվեկշռին ծանոթ լինելու լավագույն եղանակը ՁԵՐ ՎԵՐՋԻՆ ՍՏԱՑԱԿԱՆԸ ՊԱՀԵԼՆ Է: Հաշվեկշիռները բոլոր ստացականների վրա նույն տեղում չեն տպվում:

STORE NAME
100 ANY STREET ADDRESS
CITY, STATE ZIP

TERM ID 258407
MERCH TERM ID 258407ABC
SEQ# 289
CLERK 107
06/02/99 10:25
CASE # C1234567890

	TRAN AMT	END BAL
FS	$ 45.20	$ 229.80

FS PURCH $ 45.20 APPROVED

Եթե կորցրել եք ձեր վերջին ստացականը և ուզում եք իմանալ ձեր հաշվեկշիռը՝

- Զանգահարեք Հաճախորդի Սպասարկություն՝ ձեր քարտի հետևը նշված համարով, կամ
- Ստուգեք ձեր սննդադրոշմի հաշվի հաշվեկշիռը POS սարքում

ՁԵՐ ՔԱՐՏՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՄԻՇՏ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՔ ԻՄԱՆԱԼ ՁԵՐ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

Ինչպե՞ս Օգտագործել Ձեր EBT Քարտը Սննդեղեն Գնելու Համար

Հնարավոր է, որ տարբեր տեսակի POS սարքերում ձեր հետևելիք քայլերը լինեն տարբեր: Մի ամաչեք վաճառորդին հարցեր ուղղել:

Իմացե՛ք ձեր հաշվեկշիռը: Ստուգե՛ք ձեր վերջին ստացականը կամ զանգահարե՛ք Հաճախորդի Սպասարկություն՝ գնում կատարելուց առաջ:

Քայլ 1 Ընտրեք ձեր նպարեղենը և գնացեք վճարումի գիծ: Համաձայն վաճառատան, հնարավոր է, որ դուք ձեր պայմանունակ սննդեղենը առանձնացնեք ոչ-պայմանունակ ապրանքներից:

Քայլ 2 Ձեր քարտը սահեցրեք վաճառակետային (POS) կայանում կամ ձեր EBT Քարտը հանձնեք վաճառորդին:

Քայլ 3 Մուտքագրեք ձեր չորս թվանշանանոց Անձնական Ինքնության Համարը (PIN) ստեղնաշարի վրա: Կայանը ցույց կտա **** ձեր մուտքագրած թվանշանների փոխարեն:

Քայլ 4 Սեղմեք «Մուտքագրեք» (ENTER) ստեղնը:

Քայլ 5 Վաճառորդը կմուտքագրի սննդադրոշմի գումարը և եթե դա ճիշտ է՝ դուք կսեղմեք «OK» կամ «ԱՅՈ» (YES) ստեղնը:

Քայլ 6 Դուք կստանաք պատճենը տպագիր ստացականի, որը ցույց կտա՝

- Վաճառատան անունը և հասցեն
- Ձեր կատարած գնումի գումարը
- Ձեր սննդադրոշմի հաշվի նոր հաշվեկշիռը

Քայլ 7 Պահե՛ք ձեր ստացականը, որպեսզի հաջորդ անգամ գնում կատարելիս իմանաք ձեր հաշվեկշիռը:

Հիշե՛ք, որ ձեզանից վճար չպետք է գանձվի ձեր սննդադրոշմի նպաստների օգտագործման համար և չեք կարող կանխիկ փող կամ վերադիր փող ստանալ ձեր սննդադրոշմի հաշվից:

Երբ օգտագործեք ձեր EBT Քարտը, Վարչաշրջանը չի իմանա ի՛նչ եք գնել: Կիմանա միայն, թե որտե՞ղ եք գնումը կատարել և որքա՞ն եք ծախսել:

Ի՞նչ Կպատահի Եթե POS Սարքը Չաշխատի

CITICORP EFS OFFLINE FOOD STAMP VOUCHER

No.

Important! Vouchers must be entered or cleared on the POS device (or mailed within 10 days if non-electronic) within 15 days of the sale or funds will not be reimbursed.

Card Number:

Print Cardholder Name

Cardholder Signature Date

In signing this voucher, I believe that food stamp funds are available for the full amount of this transaction.

This voucher will be rejected if information in this section has been altered.

Trans. Date/Time

Approval Number

Store FNS Number

Purchase Amount

☐ Purchase ☐ Refund

Merchant ID

Print Store Name

Store Address

Store City/State/Zip Code

Store Supervisor/Clerk Signature

Food Stamp regulations prohibit representation of this voucher by merchant if voice authorization was denied.

Date Entered __ __ / __ __ /

Operator's Initials

White – Client/Customer Copy; Yellow – Merchant Copy; Pink – Non-Electronic Retailer Mail-in Copy to Retail Support Operations

NOTE: Electronic Retailers to Retain the Pink copy

Citicorp EFS Retail Support Operations • P.O. Box 30820 • Tampa, FL 33630-3220

Եթե դուք ցանկանում եք գնել պայմանունակ սննդեղեն, բայց POS սարքը չի աշխատում, կամ վաճառատանը չկա այդպիսին, վաճառողը կլրացնի մի թերթիկ, որը կոչվում է սննդադրոշմի կտրոն: Մի շարք առևտրականներ, ինչպես շարժուն վաճառողները, POS սարքեր չունեն: Վաճառողը կգրի ձեր EBT Քարտի համարը և ձեր ծախսած գումարը: Վաճառողին ձեր PIN-ը Մի՛ տվեք: Վաճառողը կզանգահարի՝ ստուգելու, որ սնունդը գնելու համար բավարար նպաստներ ունե՞ք ձեր հաշվում: Ձեզանից կխնդրվի ստորագրել կտրոնը, որի մի օրինակը կտրվի ձեզ: Անհրաժեշտ է, որ այդ օրինակը պահեք, որպեսզի ձեր վերջին EBT ստացականից հանեք ձեր ծախսած գումարը: Այդպիսով դուք կունենաք ձեր հաշվի մեջ գտնվող ներկա գումարը:

Ինչպե՞ս Խնամք Տանել Ձեր EBT Քարտին

Մի՛ պահեք ձեր քարտը և PIN-ը միատեղ:

Մի՛ կտրեք կամ ծռեք ձեր քարտը:

Մի՛ գրեք կամ քերծեք ձեր քարտի հետևը գտնվող սև երիզի վրա:

Մի՛ թրջեք ձեր քարտը:

Մի՛ թողնեք ձեր քարտը մագնիսների, հեռուստացույցերի, վիդեոսարքերի և այլ ելեկտրոնային սարքերի մոտ:

Մի՛ թողնեք ձեր քարտը արևի տակ, ինչպես՝ մեքենայի առաջամասին, որովհետև կարող է ծռմռվել և չաշխատել:

Մի՛ թողնեք ձեր քարտը բաց վայրում. միշտ ապահով վայրում պահեք այն՝ օգտագործելուց հետո:

Մի՛ շպրտեք ձեր քարտը մի կողմ. դուք նույն քարտը կօգտագործեք ամեն ամիս՝ այնքան ժամանակ, որ նպաստներ կստանաք: Բացի այդ, դուք ձեր EBT քարտը կարող եք օգտագործել որտեղ որ տեսնեք Quest® նշանը՝ Կալիֆորնիայում և ողջ երկրում:

Եթե ձեր քարտը կորած կամ գողացված է, անմիջապես զանգահարեք Հաճախորդի Սպասարկություն: Նրանք ձեր քարտը կդնեն փականքի տակ և ձեզ կասեն ինչպես կարող եք նոր քարտ ստանալ: Անհրաժեշտ է, որ զանգահարեք Հաճախորդի Սպասարկություն որքան հնարավոր է շուտ: Նոր քարտ ստանալը կարող է տևել երեք աշխատանքային օր:

Ե՞րբ Զանգահարել Անվճար Հաճախորդի Սպասարկման Համարով

1-877-328-9677

Սա անվճար զանգ է:
Հաճախորդի Սպասարկությունը բաց է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր՝ պատասխան տալու EBT Քարտի մասին բոլոր այն հարցերին, որ կարող եք ունենալ: Դուք կմիանաք Ինքնաշխատ Պատասխանի Միավորին և ձեր հարցերի մեծ մասի պատասխանները կստանաք առանց Հաճախորդի Սպասարկության Ներկայացուցչի հետ զրուցելու հարկի: Պատասխանները կարող են լինել անգլերեն, իսպաներեն, արևելահայերեն, կամպոդերեն, մանդարին, պարսկերեն, հմոնգերեն, լաոերեն, ռուսերեն և վիետնամերեն:

Զանգահարեք եթե՝

- Ձեր քարտը կորել կամ գողացվել է:
- Ձեր քարտը չի աշխատում:
- Ուզում եք փոխել ձեր PIN-ը, որովհետև մոռացել եք այն, կամ մեկ ուրիշն էլ գիտի ձեր PIN-ը: Ձեր հանրային օգնության գրասենյակը նաև կարող է ձեզ օգնել, որ փոխեք ձեր PIN-ը:
- Ցանկանում եք իմանալ, թե ինչքա՞ն է մնացել ձեր հաշվում:
- Ձեզանից գումար է գանձվել գնումի համար, բայց դուք ապրանքները չեք ստացել, կամ էլ ձեր գնումից շատ ավելին է գանձվել ձեզանից:
- Այլ հարցեր կամ խնդիրներ ունեք:

Օրը 24 ժամ/շաբաթը 7 օր

1-877-328-9677

TTY՝ 1-800-735-2929

Ե՞րբ Կստանաք Ձեր Նպաստները

Ամսի այն օրը, երբ կստանաք ձեր սննդադրոշմի նպաստները հիմնված է ձեր գործի համարի վերջին թվանշանի վրա:

Սննդադրոշմի Նպաստներ

Եթե ձեր գործի համարի վերջին թվանշանն է՝	Ձեր սննդադրոշմի նպաստները առկա կլինեն՝
1	ամսի 1-ին
2	ամսի 2-ին
3	ամսի 3-ին
4	ամսի 4-ին
5	ամսի 5-ին
6	ամսի 6-ին
7	ամսի 7-ին
8	ամսի 8-ին
9	ամսի 9-ին
0	ամսի 10-ին

- Նպաստները առկա են շաբաթավերջերին և տոնական օրերին:
- Ամսի վերջում, ձեր հաշվեկշիռը կավելացվի հաջորդ ամսի հաշվեկշռին:

Մուտքագրեք այն օրը, երբ ձեր սննդադրոշմի նպաստները կմտնեն ձեր հաշվի մեջ:

_____

(Ամսի 1-ից մինչև 10-րդ օրը)

Ի՞նչ Պէտք Է Հիշել

Ձեր Քարտի/Ձեր PIN-ի Մասին

- Եթե ձեր քարտը կորել կամ գողացվել է, զանգահարեք Հաճախորդի Սպասարկություն:
- Լավ հոգ տարեք ձեր քարտին:
- Ձեր քարտը պահեք ապահով տեղում:
- ՄԻ ԹՈՒՅԼԱՏՐԵՔ, որ մեկ ուրիշը առանց ձեր արտոնության օգտագործի ձեր քարտը:
- Ամեն անգամ ձեր քարտն օգտագործելիս գործածեք ձեր PIN-ը, բացի այն դեպքից, երբ սննդադրոշմի կտրոն է օգտագործվում:
- Ձեր քարտը ՄԻ ԹՈՂՆԵՔ POS սարքում:
- Տեղափոխվելիս՝ զանգահարեք ձեր հանրային օգնության գրասենյակ: Դուք կկարողանաք ձեր նպաստներն օգտագործել ձեր նոր վարչաշրջանում:

Ձեր Հաշվեկշիռների Մասին

- Պահեք ձեր ստացականները, որպեսզի իմանաք ձեր հաշվի հաշվեկշիռը:
- Գնումի գնալուց առաջ ստուգեք ձեր հաշվի հաշվեկշիռը:

POS Սարքերի Մասին

- POS սարքն օգտագործեք ձեր սննդադրոշմով սնունդ գնելու համար:
- Ձեր սննդադրոշմի նպաստների օգտագործման համար ձեզանից երբեք ոչ մի տեսակի վճար չի գանձվի:

Հաճախորդի Սպասարկություն

Օրը 24 ժամ/շաբաթը 7 օր

1-877-328-9677

TTY՝ 1-800-735-2929

Համաձայն Դաշնակցային Օրենքի և ԱՄՆ-ի Երկրագործական Բաժանմունքի (USDA) քաղաքականության, այս հիմնարկությանը արգելված է խտրականություն կատարել ցեղի, գույնի, ազգային ծագման, սեռի, տարիքի, կրոնի, քաղաքական համոզմունքների կամ անկարողության հիմքի վրա: Խտրականության դեմ բողոքագիր ներկայացնելու համար գրեք՝ USDA, Director, Office of Civil Rights, Room 326-W, Whitten Building, 1400 Independence Avenue SW, Washington, DC 20250-9410 հասցեով կամ զանգահարեք (202) 720-5964 (ձայն և TDD) համարով: USDA-ը հավասար հնարավորություններ է տրամադրում և այդպիսով է աշխատանքի ընդունում:

STATE OF CALIFORNIA
Arnold Schwarzenegger, Governor
HEALTH AND HUMAN SERVICES AGENCY
Kimberly Belshé, Secretary
DEPARTMENT OF SOCIAL SERVICES

PUB 387 (E. Armenian) (2/06)